

ԱՐՑԱԽՆԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՎԱՐՂԱՆ ՀԱԿՈՒՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Ա.Վ. Գրիգորյան

Արցախյան ազգային-ազատագրական պայքարի գաղափարական դրոշակակիրներից է անվանի գրող Վարդան Հակոբյանը: Արցախյան գոյամարտի հենց սկզբից նա իր գրչընկերների հետ ակտիվորեն ոգևորել է ժողովրդին՝ հանդես գալով և՛ հրապարակախոսական ելույթներով, և՛ պոետական իր հզոր խոսքով:

1988 թ. հունվարին բանաստեղծ Վ. Հակոբյանը Գուրգեն Գաբրիելյանի, Հրաչյա Բեգլարյանի, Սոկրատ Խանյանի և այլ մտավորականների հետ վերջնական տևաբի է բերում ԽՍՀՄ Կենտրոնի գլխավոր քարտուղար Մ.Ս. Գորբոչովին ուղղված այն նամակը, որով պահանջվում էր Արցախը վերամիավորել Հայաստանին: Մոսկվայում այն հայտնի դարձավ «17-ի նամակ» անունով, որովհետև նամակի տակ ստորագրել էին տասնյոթ մտավորականներ: Որպես բանագնացներ Մոսկվա մեկնեցին Վ. Հակոբյանը, Գ. Գաբրիելյանը, Հ. Բեգլարյանը: Մոսկվայից վերադառնալուց անս նրանք փետրվարի 18-ին Ստեփանակերտի վերածնության հրապարակում ժողովրդի առջև հանդես եկան՝ հնչեցնելով մինչև վերջ պայքարելու կոչը

Վ. Հակոբյանը այդ թեժ օրերին ցած չդրեց գրիչը՝ ստեղծելով մարտաշունչ երգեր, պոեմներ, բալլադներ և այլ գործեր: Կարևորելով գրողի դերն ու առաքելությունը, բանաստեղծը գրել է. «Մեր յուրաքանչյուր տող պիտի գնա այն ուղղությամբ, ինչ ուղղությամբ հոսում է մեր հողի համար ընկած զինվորի արյունը»:՝<sup>1</sup> Սա խոսում է այն մասին, որ գրողը պայքարի պահին գրիչը պետք է փոխարինի զենքով, մարտի նետով՝ գրչով ու զենքով: Չափազանց բեղմնավոր եղավ Վ. Հակոբյանի գրիչը շարժման և պատերազմական տարիներին :1989թ. սկսած իրար հետևից տպագրվեցին Վ. Հակոբյանի «Ամարասի գանգերը» (1989թ), «Արցախա ծուխ» (1989թ), «Մերոպ Մաշտոցն Ամարասում» (1989թ), «Տաճարն Աստծո» (1991թ), «Սոսն» (1994թ), «Մենարան» (1996թ) և այլ գրքեր:

Գրականագետ Ս. Սարինյանը Վ. Հակոբյանի «Մենարան» ժողովածուի առաջաբանում գրում է. «Անամպ էր Վարդանի հոգու երկինքը մինչև 1998-ի փետրվարը: Վերահաս իրադարձություններն այլ գույներով են ներկում Արցախի բնանկարը: Մնում է Սերը, որ նախաստեղծ է, Բնության և Կարոտի արձագանքները անհանգստացնում են Արցախ-Պատմություն-Ցավ նրբորդության հոգեբանական տագնապներին: Բանաստեղծի հոգու վրա ծանրանում է օրերի մղձավանջը, իրերի շարժումը փոխակերպվում է անկերպության քառսի... Այլ դողանջներ են հղում Գանձասարի և Ամարասի գանգերը, հողի հիշողությունից վերընձյուղվում է Հայկ Նահապետի ձգված աղեղը և պատմությունը մեր ազգային օրագույցի վրա դրոշմում է Ավարայրի և Սարդարապատի զինանշանը»:՝<sup>2</sup> Եվ ինչպես գրականագետ Ս. Խանյանն է նկատում. «Սա մի դիտարկում է, որ վերաբերում է Վ. Հակոբյանի բոլոր գրչակից ընկերներին, ովքեր գտնվում էին Արցախում և մասնակցում թշնամու դեմ զենքի ու երգի միասնականությանը ընթացող համաժողովրդական մարտմանը»:՝<sup>3</sup>

Վ. Հակոբյանի «Արցախա ծուխ» ժողովածուն ոգևորման, հարատևման, պայքարի ծուխ է: Այստեղ քնարական հերոսը միաձուլված է Արցախին: Նա զգում է հայրենիքի ցավը, որը հին է, բայց այսօր էլ շարունակվում է պայքարը թշնամու դեմ:

«Մղձավանջ» բանաստեղծության մեջ Վ. Հակոբյանը պատկերավոր ձևով ներկայացնում է Արցախ աշխարհին անհանգստացնող չարիքը: Եվ այդ չարիքից Արցախը փրկության լույս է փնջում, անգամ քարերն են ցավից ճշում: Բանաստեղծը, սակայն, լավատես է.

Մղձավանջը Տան լույսից մարում է,  
ամեն նահատակ գոյության վճիռ,  
հավատը՝ սուրբ տուն, տաճարվող միամբ,

առավոտը բաց դաս է հառնումի,  
և դարձն՝ արմատանց՝ մարտիրոսություն:<sup>4</sup>

Պոետը ժողովածուի «Ձգված աղնդներ» նրգում դառնորեն գրում է, թե ինչպես անտառը խրվում է ամալի մեջ, ձորում խրխինջը կորցնում է ձիուն, «Օրվա մտքի մեջ խայտում է սուտը»: Իսկ լեռների գագաթները աստղերի զոհասնդան են երևում, «խիղճը փնտրում է ու չի գտնում տներ», դրա համար էլ «օրերն անցնող՝ սլացող նետ են»: Չնայած դրան, քնարական հերոսը չի հուսահատվում.

Չանգը արթնացավ արյան խորքերում,  
գոհերը ելնում, միանում են մեզ,  
անթիվ ձեռքերով գրկվել է Քիրսը  
և լեռան փեշից մեռն է թափվում,  
Ինչ էլ որ լինի՝ մենք լինելու ենք:<sup>5</sup>

«1988 թիվ փետրվար» բանաստեղծության մեջ հեղինակը արևը համեմատում է «պատուհանից դուրս նետված» արյունաքամ մանկան հետ, իսկ երկինքը՝ սարդի ցանցի: Ապա բացվում է կապանքի սուտը, ավարտվում է ամեն մի դիմակահանդես: Եվ իրականությունը ներկայանում է իր ամբողջ մերկությամբ: Պարզվում է, որ խաբկանք էր ամեն ինչ և որ ոչինչ չի փոխվել. «գայլը գայլն է նույն՝ բնությունը պատիր՝ գառան մորթու մեջ, թե որջում անտես»: Մեր թշնամին միշտ էլ առիթը բաց չի թողել իր գագաթնային մոլուցքին հագուրդ տալուն: Բանաստեղծը գրում է.

Ատամը արյան համ առավ կրկին,  
Նորց երևաց մուրթը գայլի...  
Մզլոտ աչքերում վառվում է ուժգին  
Ենիչերական մոլուցքը վայրի:<sup>6</sup>

Ապա պոետը մեզ հիշեցնում է, որ անգյալից պետք է դասեր քաղենք, «ինչ թաթ էլ ցույց տան դրան նեղ ճեղքից» դուռը չպետք է բացենք, հողը պետք է բերդ դարձնենք, սրբենք մամուռը և միշտ հիշենք, որ.

Մենք՝ որդիք Հայկի, արդար ու վսեմ,  
ցավ ու դառնություն այդ ե՞րբ չենք տեսել,  
Բայց ոչ մի անգամ, աստված է վկա,  
Արցախին հաղթող չի եղել, չկա...<sup>7</sup>

Գրող-իրապարակախոս, Արցախի հերոս Չորի Բալայանը բարձր գնահատելով Վ. Հակոբյանի տեղն ու դերը Արցախյան շարժման օրերին, գրում է. «Մեր նորագույն պատմությունն ու արցախյան համազգային շարժումը դժվար է պատկերացնել առանց Վարդան Հակոբյանի: Դժվար է պատկերացնել և մեր պոեզիան առանց մարտնչող պոետ Վարդան Հակոբյանի: Այնպես են դասավորվել իմ ճակատագիրն ու կյանքը, որ ես մշտապես եղել եմ կամ մասնակիցը, կամ ակնաստեղծը մեր ազգային գոյամարտի բոլոր կարևորագույն ու ճակատագրական անցուղարձերի: Եվ կարող եմ վստահորեն ասել, որ ամենածանր ու դժվարին ճանապարհների գրեթե բոլոր խաչմերուկներում հանդիպել եմ Վարդանին՝ լինի դա մեր ողբերգաշունչ նկուղներում(այս մասին Վարդանը պինտ է գրել («Արցախյան բալլադ»), լինի դա հոսպիտալում, որտեղ բուժվում էին հերոսները»<sup>8</sup>:

«Ամարասի գանգերը» խորագրով ժողովածուում բանաստեղծը այսպես է բնութագրում մեր երկիրը «քարերը հասցե են ու գիր Եվ ճամփաներ են ծորում արյունից և մանանա է հողը սրբազան, Արցախն էլ հույսի անտառ վեհարան»:

Պոետը հայոց երկիրը համարում է Աստծո տաճար և մտնելով վանք իր աղոթքն է հնչեցնում նրան.

Երբ վանք են մտնում, մտնում են տաճար,  
ուրեմն՝ Աստծուց լսելիք ունեն,  
ուրեմն, Աստծուն ասելիք ունեն,  
ուրեմն, լույսը դեռ բաց է մնում,  
ուրեմն, հույսը դեռ հաց է մնում,  
Եվ հոգու կանչ է դողանջը գանգի:<sup>9</sup>

Նետաքրքիր է ժողովածուի «Այս խաչքարը ես եմ» բանաստեղծությունը, որտեղ հեղինակը ընդգծում է հայ ժողովրդի իմաստությունն ու անմահությունը: Հայրենի երկրի ամեն մի խաչքար հայոց պատմության խոսուն վկան է, որն իր մեջ կրում է մեր նախնիների սրբազան պատգամները: Եվ ոչ միայն խաչքարերը, այլև անգիր քարերը լուռ պատմում են մեր երկրի պատմությունը.

Մի փունջ խոտ պոկիր և սրբիր փոշին՝  
ինչ քար էլ լինի

հողում տարատանջ,  
ստ՝ րբ ու արցախյան:  
Եվ կտնանես, որ աչքերիդ առաջ  
կելնի-կհառնի  
անուշ մի երկիր՝  
աշխարհ հայաստան:՝<sup>10</sup>

Վ. Հակոբյանը «Սոսն» ժողովածուում կոնկրետ հնչեցնում է պայքարի կոչը: Հեղինակը դիմելով Սոսնի կերպարին, որը խորհրդանշում է հայ ֆիդայուիտուն, նրան ներկայացնում է որպես սիրո և հայրենիքի ամբողջություն, այսինքն՝ պայքար: Ըստ բանաստեղծի Աղբյուր Սերոբին ֆիդայական սխրագործությունների է մղել նաև Սոսնի մեծ սերը: Եվ պատահական չէ Սոսնի վերածնվելը արցախյան ազգային-ազատագրական պայքարում: Ժողովածուն բացվում է «Բանաստեղծության համար չեմ ասում...» տողով սկսվող երգով: Երգիչը նորօրյա մաքառումը կամրջում է հայ ժողովրդի առասպելական ժամանակների, Վարդանանց պատերազմի և ապա՝ հետագա դարերում մղված հերոսական պայքարներին: Նա իր էության մեջ հայտնաբերում է ազգային հերոսների ոգին, ոտքերի տակ զգալով Ավարայրի հողը, լսելով Վարդանանց կռվի ձայնը, կամ Սարդարապատում ընկած զինվորի փառքը:

Պայքարի երգիչը շարունակում է հնչեցնել մարտաշունչ երգեր, որոնք մարմնավորում են իրական հերոսներ: Նա «Վարդանանց բլուր» բանաստեղծության մեջ, ի գիտություն մեզ, գրում է, որ Արցախյան մի գործնական կռվել է Ավարայրում և դարձին հերոսաբար նահատակվել Եղեգնաձորում: Հերոսների աճյուններն ամփոփող բլուրը հիմա կոչվում է Վարդանանց բլուր: Բանաստեղծության համար հիմք է հանդիսացել հենց այս փաստը: «Արցախա ծուխ» ժողովածուն բացվում է այս բանաստեղծությամբ: Քնարական հերոսը իրեն համարում է ժառանգորդը Վարդանանց քաջերի: Բանաստեղծը իրար է կապում հայոց պատմության բլուր ժամանակները և նրանցում տեսնում իր և իր ժամանակակիցների պատասխանատվության զգացումը՝ Արցախի, մայր ժողովրդի ճակատագրի հանդեպ: Նա գտնում է, որ Արցախի նոր ճանապարհն իր սկիզբը պետք է առնի Վարդանանց պատերազմից՝ ներառելով ողջ Հայոց աշխարհը.

Ծարունակվում է գետը Եղեգիք,  
և վանքի ձայնը այբբենաբան է,  
և աղեղները պրկվում են նորից,  
և ձեռքի թրում Թարթառն է շողում,  
և ձին կարմիր է, Վարդանը կարմիր:՝<sup>11</sup>

Կարմիրը այստեղ խորհրդանշում է պայքարը: Այս իմաստով «Վարդանանց բլուր» բանաստեղծությունը հնչում է որպես ձոնեղ, մաքառման կոչ՝ ուղիված համայն հայությանը.

Դարձը ճամփի հետ մաքառող տուն է,  
և ամեն թուփ-քար զինվոր, Եղիշե,  
և Խաչենն ի վար Տղմուտն է հոսում,  
և հողից ելնող ծլուղ հերոսներ,  
և Աստված մեկը հազար է անում:՝<sup>12</sup>

Հայրենանվեր գրողը խորապես քաջատեղյակ լինելով հայ ժողովրդի պատմությանն ու ճակատագրին, Արցախյան շարժման օրերին դիմում է պատմության օգնությանը՝ ժողովրդին քաջալերելու, անցյալից դասեր քաղելու և անսխալ գործելու նպատակով: Իր բանաստեղծական շարքերում, պոեմներում ոգեկոչելով հայ ազգի փառավոր ու հերոսական ժամանակները, պոետը ժողովրդի մեջ արթնացնում է մաքառման ոգին, մղում նրանց ազատ ու անկախ ապրելու սխրանքների: Բանաստեղծը կամրջում է հայրենիքի անցյալը՝ ներկային: Եվ դա անում է նպատակադրված. «...ես ցանկացա պատասխանել մեր ժողովրդի պատմությունը խնդրալուրդներին, - գրում է նա, - բլուրը նրանց, ովքեր «աչք են տնկել» մեր հող ու ջրին, մեր խաչքարին»<sup>13</sup>: Այս առումով պատմական նշանակություն ունեն Վ. Հակոբյանի «Մնարոպ Մաշտոցն Ամարասում» և «Տաճարն Աստծո» պոեմները:

«Մնարոպ Մաշտոցն Ամարասում» պոեմում գրողը պատկերում է պատմական այն փաստը, որի համաձայն՝ գրերի գյուտից հետո Մնարոպ Մաշտոցը դարձրել է բացել նաև Արցախի Ամարաս վանքում: Հեղինակը այստեղ փառաբանում է մեր առաջին ուսուցչի նվիրական ու սուրբ գործը:

Կարևորելով Արցախ աշխարհի պատմական մեծ նշանակությունն ու դերը, գրողը պոեմի նախնորգանքում պատկերում է Արցախի խորհրդանշել Սոսնի ծառը, որը տնկվել է Տիգրան Մեծի զինվորների ձեռքով: Այդ ծառի շվարում հանգրվանել ու հանգստացել են մեր ազգի հանճարները՝ Գրիգոր Լուսավորիչ, Մնարոպ Մաշտոց, Վարդան Մամիկոնյան, Մ. Խորենացի, Դավթակ Բերթոթ, Կաղանկատվացի, Գանձակեցի, Գոշ, նաև Րաֆֆի ու Լևոն, ընդհուպ մինչև Իսահակյան:

Այնուհետև, ներկայացնում է այն գեղեցիկ տեսարանը, երբ Լուսավորչի սարի ստորոտում արցախցիները մեծ ոգևորությամբ ու ցնծությամբ դիմավորում են մեծ ուսուցչի գալուստը: Մարգարեն իր հետ բերում է մեր ոսկեդարի գիրը՝ Վարդապետի մեռնով օժված, որ արմատ է նետել Մուշ ու Տարնում, Գողթան գավառում և Դադիվանքում: Այն Արցախի համար ոչ միայն պարզապես գիր է, այլ փրկության ու հարատևության լույս:

Եվ փրկարարը բերում է գիրը,  
Եվ ողջ Արցախն է խոնարհվում նրան:  
Երկնքից իջնում է լույսի մանանա...<sup>14</sup>

Ապա Երանելին Ամարաս վանքի կամարների տակ հիմնում է «դպրոց-կրթարան»: Նեղինակը այստեղ պատկերում է ժողովրդի խանդաղատանքն ու անսահման ուրախությունը: Բանաստեղծը ընդգծում է նաև այն գաղափարը, որ հողի հետ կապված հայ մարդը իր մեջ կրում է ժողովրդի հոգու գեղեցկությունն ու բարոյական վեհությունը: Ահա թե ինչու Մաշտոցին հմայում էին ոչ միայն Արցախի հեքիաթային բնաշխարհը, այլև հասարակ մարդիկ, ովքեր լի են կենսունակությամբ, հայրենասիրությամբ և աշխատասիրությամբ:

Պոեմում հանդես է գալիս նաև Վարդան Մամիկոնյանը: Այս առիթով Վ. Հակոբյանը մի հարցազրույցի ժամանակ ասել է. «Մերոպ Մաշտոցին և Վարդան Մամիկոնյանին, իմ պոեմում, միասին եմ բերել Արցախ: Նրանք պետք է միշտ միասին լինեն: Դա է մեր ուժը»<sup>15</sup>:

Մա նշանակում է, որ նորօրյա գոյամարտում պետք է գործել գրի ու սրի միասնությամբ:  
Հնչում է Վ. Մամիկոնյանի խոսքը որպես պատգամ.

Մեր սուրբ դպրահոր արարած գրով,  
մեր դարբինների կռած սրերով  
պիտի նորոգենք  
ու նորոգվենք,  
արդարագրենք  
գիրը մեր ազնիվ ճակատին դաշված...<sup>16</sup>

Բանաստեղծը գտնում է, որ ժողովրդի հավերժության ապահովումը պայմանավորված է գրի և սրի զինակցությամբ: Այս առումով հետաքրքիր է պոեմի «Այբուբենը՝ սրի վրա» մասը, որտեղ ասվում է.

Ժողովուրդը, որ տառեր է գրում  
անգամ իր թրին,  
Աշխարհում նրան հաղթող չի լինի,  
Առավել ևս՝  
Ժողովուրդն այդ չի մնա գերի...<sup>17</sup>

Ապա պոեմի վերջում հավելում է, որ արցախցիները իրենց բնույթը առել են հողից, որ հողն Արցախա բնավ էլ հող չէ, այլ իմաստություն, հավատ, սրտի կրակ, կարմիր որդան և վերջապես Մաշտոցի և Վարդանի ոգին է, որին պարտություն չկա:

«Մերոպ Մաշտոցն Ամարասում» պոեմի գլխավոր գաղափարը ժողովրդի հավերժությունն է, որով էլ պայմանավորված է Մաշտոցի գործի նշանակությունը: Այստեղ տեղին եմ համարում մեջբերել բանասեր Հ. Ղազարյանի խոսքերը. «Վ. Հակոբյանի հայրենասիրական երգերի շարավիղիները հորիզոններ են ընդգրկում: Հայրենիք ասելով՝ նա հասկանում է այն ամենը, ինչով տարածքը և ժողովուրդը միանում են և ստանում իմաստ, ձևեր բերում դիմագիծ, ծիածանվում որպես ազգային ոգի: Առանց մայրենի լեզվի իմաստագրվում է հայրենի օջախն անգամ, միայն մերոպատառ հայերենն է, որ ամենուրեք հրաշքներ է գործում»<sup>18</sup>:

Պատմությունը բոլորովին նոր տեսանկյունից է իմաստավորվում Վարդան Հակոբյանի «Տաճարն Աստծո» պոեմում: Այն բաղկացած է չորս մասերից: Պոեմը ծնվել է Արցախյան գոյամարտի տարիներին: Նեղինակն այստեղ ասաբերեց է հանում Արցախ աշխարհի հերոսական անցյալն ու ողբերգական ներկան:

Պոեմի առաջին մասում, Հայոց Արևելից երկիրը՝ Արցախը, ներկայացված է որպես աշխարհում խաղաղության, մարդասիրության, սիրո, հավատի, արդարության միակ խորհրդանիշ: Նա առանց Արցախի չի պատկերացնում իր երջանկությունը.

Եթե  
արցախի մանուկը  
ծաղիկ չի նվիրում մորը,  
ուրեմն՝  
աշխարհում ոչ մի մայր  
իր որդուց ծաղիկ չի  
վերցնում,

ուրեմն՝ աշխարհում ոչ մի ծաղիկ ծաղիկ չէ:<sup>19</sup>

Բանաստեղծի քնարական հերոսը գտնում է, որ արցախցին իրավունք ունի հպարտանալու, որովհետև, ինչպես հաստատում է ինքը.

Ճանապարհը տաշել եմ ոտքերով

Քարքարոտ

Ու դրել իմ երազների մեջ տեղում:<sup>20</sup>

Քնարական հերոսը չի հավատում նյու-յորքներից, փարիզներից եկող ձայներին. «որ գալիս են դրսից, ոչ ներսից»: Ապա բանաստեղծը ընդհանրացնում է. «Իսկ մեր ցավը շրջիկ է, մարմին մտած ասեղ է, որ երկրի բոլոր երակներով անցնում է ու վերջում մեր սիրտը պիտի խրվի»: Պոետը կոչ է անում չհավատալ սուտ խոստումներին, որովհետև դրանք միշտ էլ խաբուսիկ ու կեղծ են եղել, հետևաբար՝.

Թե ապրել է՝ մեր ցավերում ապրենք,

Թե թռչել է՝ մեր երկնքով թռչենք,

Թե թրջվել է՝ մեր ջրերում թրջվենք...<sup>21</sup>

Բանաստեղծը ամբողջ պոեմի ընթացքում ներկայացնում է նաև միջանկյալ արձակ բանաստեղծություններ, որոնցում կատարում է ընդհանրացումներ: Գրելով, որ «Ներսը պիտի աճի հողից ու բարձրանա այն դաշտում, ուր պատերազմ է խաղաղության համար, ուր ինքը չի կարող չաճել, քանզի այդտեղ մարդկանց արյուն է հեղվել»:

Վ. Հակոբյանը գտնում է, որ արցախցինըրը պետք է ապավինեն միմիայն իրենց ուժերին, որովհետև աշխարհը անտարբեր է մեր ցավի հանդեպ:

Այնուհետև բանաստեղծը ասպարեզ է բերում համաժողովրդական ցավից շուտ մեծացած երեխայի, որ կարողանում է վրայից նետել որբության խարանը: Այդ երեխան իր մեջ մարմնավորում է նորոյա սերնդի դիմապատկերը: Պոետն ու Վ. Հակոբյանը հաճախ է գուգակցում անցյալի դեմքերն ու դեպքերը ներկային՝ դրանով իսկ ոգևորում ժողովրդին:

Մեծ երեխայի անունը դրինք

Առան,

և պարետային ժամը նահանջեց,

և երկրի ընդերքից դուրս եկան ջրեր,

որ երգեն ցավը ծարավ երկնքի...<sup>22</sup>

Աղվանքի նահապետ Առանի և քաջ արցախորդու միասնական ոգին է տիրում պոեմում: Եվ նորոյա պայքարը ծնունդ է տալիս մի նոր Առանի ու նոր Սոսնի: Նոր Առանն է գոհված ազատամարտիկ, քանդակագործ Արմեն Հակոբյանը: Նրանից կհառնի մի նոր Առան, Առանից էլ՝ Արմենն ու այդպես շարունակ:

«Տաճարն Աստծո» պոեմի երկրորդ՝ «Ամենատաք կետում» գլխում, բանաստեղծը ներկայացնում է մերոյա իրադարձությունները, ժողովրդի հիասթափությունը ԽՍՀՄ ղեկավարությունից:

Պոեմի երրորդ մասը վերնագրված է «Հուլունք Ծամիրամա», որը մի նոր երանգ է տալիս պատումին: Այստեղ հեղինակը հպարտությամբ է ներկայացնում մեր նախնիներին, որովհետև նրանց շնորհիվ է, որ Արցախը մնացել է Արցախ: Հատկապես վառ երանգներով են ստեղծված Սաթենիկի և Առանի կերպարները:

Սաթենիկը, ըստ բանաստեղծի, «առավել աստվածուհի է, քան աստվածուհին»: Նա բնութագրվում է ոչ միայն արտաքին, այլև հոգու գեղեցկությամբ: Սաթենիկը Առանին պատվիրում է պսակից առաջ գնալ և մարտնչել նենգ Ասորեստանի դեմ, նվաճել «պատիվը հայոց բարձրիկ աշխարհի»: Առանը ընդունում է Սաթենիկի պատգամը և վերադառնում է հաղթանակներով՝ իր հետ բերելով Ծամիրամի ուլունքը: Այստեղ հայրենիքի ճակատագիրը միահյուսված է Առանի և Սաթենիկի սիրուն:

Պոեմի վերջին՝ չորրորդ մասը վերնագրված է «Աստծո տաճար»: Որպես բնաբան մեջբերված է Մ. Կադանկատվածու «Աղվանից աշխարհի պատմությունը» գրքից մի հատված, որն է՝ «Վաչագան արքայի ժամանակ կատարվում է տիրոջ ասված խոսքը, թե՛ «նա, որ գործում է և ուսուցանում, Աստծո արքայության մեծ է կոչվում»: Հենց այս արեց աստվածասեր Վաչագան թագավորը»<sup>23</sup>:

Բանաստեղծը երախտագիտությամբ է բնութագրում Վաչագան թագավորին, ով անչափ մեծ դեր է խաղացել Արցախ աշխարհի հզորացման գործում:

Պոեմում, որպես հերոսներ, Վաչագան թագավորն ու Անահիտ թագուհին իրենց սիրո ներշնչանքով ու իմաստությամբ կերտում են արցախյան պատմությունը՝ «Տաճարն Աստծո» և դեպի ուր էլ տանում է բանաստեղծի ուղին.

Եվ ճանապարհը ինձ տանում է Տաճար:

Տաճարը ձեռք է - բարձրացող հավատ:

Տաճարը աչք է - լույսի պատուհան:

Տաճարը սիրտ է- սիրտ վեհարան:<sup>24</sup>

Անցյալը հառնում է պոետի պատումի մեջ, որով նա հպարտանում է, միաժամանակ բացականչում.

Անցյալն, այո, պիտի ապրել  
ու վերապրել,  
բայց ներկայի հաշվին՝ նրբեք,  
այլապես մենք կկորցնենք,  
ձեռքից կտանք և ... ապագան:<sup>25</sup>

«Տաճարն Աստծո» պոեմում միահյուսված ենք տեսնում պատմականությունն ու առասպելականությունը, բնության կախարդական անակնկալներն ու բանաստեղծական արվեստի գունագեղությունը:

Գրականագետ Սոկրատ Խանյանը վերլուծելով ու արժեկրեկելով երկը, գրում է. ««Տաճարն Աստծո» պոեմը հետաքրքիր է կոմպոզիցիոն և պոեմատային յուրօրինակ կառուցվածքի տեսակետից: Նրանում բացահայտվել են բանաստեղծի պատկերավոր մտածողության նրանգները, շարժուն վիճակներ և փիլիսոփայական խորք ունեցող էպիգրամներ ստեղծելու կարողությունը: Այն արցախյան շարժման հետ կապված համահայկական ցավն ու ակնկալությունները պատկերող միակ ծավալուն գործն է, որի մասին գրականագիտությունը դեռևս կասի իր խոսքը»:<sup>26</sup>

Հիրավի, Վ. Հակոբյանի ստեղծագործությունները խնդրո առարկա թեմայով սպասում են իրենց ապագա ուսումնասիրողներին:

### *Ծանոթագրություններ*

1. Վ. Հակոբյան, Երկեր, հ. Ե, Ստ., «Դիզակ պլյուս» հրատ., էջ 547, 2008:
2. Ս. Սարինյան, Բանաստեղծի հայտնությունը, Վ. Հակոբյան «Մենարան» (Եր., 1996) գրքի առաջաբանը, էջ 4:
3. Ս. Խանյան, Հայ պոեզիայի զարգացման միտումներն Արցախում (1950-1990-ական թթ.), Ստ.: «Վաչագան Բարեպաշտ» հրատ., էջ 258, 2005:
4. Վ. Հակոբյան, Արցախյան ծուխ, Եր., «Լույս» հրատ., էջ 7, 1989:
5. Նույն տեղում, էջ 9:
6. Նույն տեղում, էջ 10:
7. Նույն տեղում:
8. «Եղիցի լույս», N 5, էջ 3, 2008:
9. Վ. Հակոբյան, Ամարասի զանգերը, Եր., «Լույս», էջ 14, 1989:
10. Նույն տեղում, էջ 26:
11. Վ. Հակոբյան, Արցախյան ծուխ, Եր., «Լույս» հրատ., էջ 5, 1989:
12. Նույն տեղում:
13. Վ. Հակոբյան, Երկեր, հ. Ե, Ստ., «Դիզակ պլյուս» հրատ., էջ 543, 2008:
14. Վ. Հակոբյան, Ամարասի զանգերը, Եր., «Լույս», էջ 62, 1989:
15. Վ. Հակոբյան, Երկեր, հ. Ե, Ստ., «Դիզակ պլյուս» հրատ., էջ 543, 2008:
16. Վ. Հակոբյան, Ամարասի զանգերը, Եր., «Լույս», էջ 82, 1989:
17. Նույն տեղում, էջ 108:
18. Ն. Ղազարյան, Արցախի բանաստեղծական արվեստի լեզուն և ոճը, էջ 104, 2007:
19. Վ. Հակոբյան, Տաճարն Աստծո, Արցախ, էջ 3, 1991:
20. Նույն տեղում:
21. Նույն տեղում, էջ 4:
22. Նույն տեղում, էջ 6:
23. Նույն տեղում, էջ 20:
24. Նույն տեղում, էջ 22:
25. Նույն տեղում, էջ 23:
26. Ս. Խանյան, Արցախյան պատերազմը և հայ պոեզիան, Ստ., էջ 71, 1998:

### *Резюме*

В данной статье анализируются и оцениваются стихи и поэмы талантливого поэта Вардана Акопяна, в которых описываются Арцахское национально-освободительное движение и

пережитые во время войны тяжелые дни арцахцев, решающая борьба против азербайджанского ига во имя свободы Арцаха и воссоединение армянского народа.

В статье особое место занимают анализы поэм «Храм Бога», «Месроп Маштоц в Амарасе», а также сборник стихов « Сосе ».

Отмечается, что В.Акопяну удалось в своеобразном художественном стиле изобразить арцахскую войну, создать яркий образ армянского героя-освободителя.

**ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**  
**УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

1-2 (23-24) 2011

ՀՏԴ 82.09

Գրականագիտություն

**ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՄԻՖԱՍՏԵՂՇՈՒՍՐ**

**Ն.Ս. Մնացականյան**

Գրականությունը սերտորեն կապված է ժողովրդի կյանքի հետ և, ըստ այդմ, յուրաքանչյուր ժողովրդի գրականություն արտացոլում է տվյալ ժողովրդի պատմության և հոգեբանության յուրահատուկ կողմերը:

Ինչպես ամեն մի խոշոր գեղագետ, Վրթանես Փափազյանը նույնպես իր բացառիկ տաղանդով արտացոլել է բարդ ու հակասական իրադարձություններ և սուր բեկումներ:

Արխատտելը ժամանակին գրել է, որ որ գեղարվեստական ստեղծագործության ակունքն իրականությունն է, որից նյութ է քաղում արվեստագետը:

Վրթ. Փափազյանը ևս իր գործերում ներկայացրել է իրական կյանքը՝ պատկերելով սուլթանական Թուրքիայում տիրող դատաբնական վայրենի բարքերը, քննչական պրոցեսի զագրելի բնույթը, ընդգծել, որ «Արդարություն» կոչվածը գոյություն չունի Թուրքիայում, այն «կորսված» էր:

Փափազյանը, խարազանելով օսմանիզմը, միաժամանակ քննադատել է ազգային հրեշներին: Նա գրել է. «Վատը՝ վատ է, թեկուզ նա հայ լինի, հրեշը՝ հրեշ է, թեկուզ նա մեր ազգակից եղած լինի... Կռվել թուրքի, քուրդի բռնակալ պաշտոնյաների, հայ մատնիչի և հրեշի դեմ»<sup>1</sup>: Սա էլ եղել է նրա նշանաբանը:

Ծանր էր Թուրքիայի լծի տակ տառապող արևմտահայերի վիճակը:

Գյուղերը հիմնականում պատկանում էին բեկերին և կազմում էին նրանց սեփականությունը: Գյուղացիները հլու-հնազանդ կատարում էին բեկի և նրա ծառա՝ գյուղապետի քնահաճույքները:

Գյուղապետի և հարուստների վճիռը վավերացնում կամ փոփոխում էր բեկը, որը, կաշառելով իշխանավորներին, իրավունք ուներ պատժելու բնակիչներին, որոնք ստիպված էին գրկանքներին դիմանալ: Ողջ սեփականությունը պաշտոնապես պատկանում էր բեկին, որն ամեն բոլոր կարող էր նրանց դուրս վռնել իր հողերից և թողնել մերկ ու քաղցած...

Իր հողավածներից մեկում Վրթ. Փափազյանն այսպես է գրել դատի մասին. «Մի որևէ դատ, եթե չէ վճռում գյուղապետի նախագահությամբ կազմված համփաների ժողովը, դիմում են բեկին, հետո առաջնորդին և վերջապես տեղական կառավարությանը: Այդ վերջին դիմումը այժմ ավելի հաճախ է: Այժմ գյուղացին կարծելով, թե գյուղական վարչությունը կամ հայ դատաստանական ժողովը սխալ են վճռում, դեմքերում է քաղաքական դատաստանները... և վայ այն գյուղացուն, որը մի անգամ ոտ կկոխե այդ տեղերը... հրաշքի նման երևույթ են համարում այն, եթե մի գյուղացի անվնաս դուրս պրծնի այդ դատարանից»<sup>2</sup>:

Թուրքահայաստանի յուրաքանչյուր գյուղ ազատ չէր թաշիրի, աշարի, դամջուրի, ինթիզաբի, պակի և այն բոլոր տուրքերից, որոնք ընդհանուր անունով կոչվում են բահրա: Խնդր գյուղացին ամբողջ տարին քրտնաջան աշխատանքով դիզում էր իր բերքը, բայց նրանից գանձվող հարկերի պատճառով գյուղացուն անգամ ձմեռվա պաշար չէր մնում:

Հարկահանները գյուղացիներից հարկ էին գանձում ամենաստոր միջոցներով. «Հարկահանը «զափթիկ»-ներով գյուղն էր մտնում, ուտում էր, խմում, թափում, կոտրում, հետո հավաքում էր հարկը, թեկուզ այդ տարին գյուղացին և ոչ մի իսկ տավար ունեցած կամ ցորեն քաղած լինի: Վերջին ունեցածներն առնում էր. եթե հակառակում էին, ծեծել էր տալիս ժողովում,